ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- ապրիլի 2021 թվականի №Ա
ք.Երևան

«ՍՈԼԱՐՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունվարի 31-ի №14Ա որոշմամբ «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Արգեստ» հողմային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0618 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0618 լիցենզիա)՝ մինչև 2041 թվականի հունվարի 31-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի հունվարի 31-ը,

բ) ԼԷ №0618 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի հուլիսի 31-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, ինչը, սակայն, Ընկերության կողմից չի կատարվել, որի արդյունքում նշված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ համարվել է երկարաձգված մինչև 2021 թվականի հունվարի 31-ը, և նշված պարտավորությունը այդ ժամկետում ևս չի կատարվել,

գ) Ընկերությունը 2021 թվականի հունվարի 8-ի գրությամբ (այսուհետ՝ Դիմում) խնդրել է 34 ամսով երկարաձգել ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված կայանի

կառուցման ժամանակահատվածը, միաժամանակ հայտնելով, որ իր 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0620 լիցենզիայի համաձայն շահագործում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի վարչական տարածքում կառուցված (գյուղ Սոթք) «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանը: Հաշվի առնելով նշված հողմային էլեկտրակայանի շահագործման փորձը, տվյալ տարածքում առկա հողմային ռեսուրսները և դրա շնորհիվ էլեկտրական էներգիայի ավելի արդյունավետ արտադրության հեռանկարը՝ «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերությունը նպատակադրվել էր ներդրումներն իրականացնել այդ ուղղությամբ, այսինքն Կայանի կառուցման փոխարեն որոշվել էր 4 ՄՎտ-ով ավելացնել «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանի հզորությունը, ինչը կնպաստեր այդ ռեսուրսի առավել արդյունավետ օգտագործմանը: Այդ նպատակով նախագծային կազմակերպության կողմից կազմվել են համապատասխան նախագծային փաստաթղթեր և անցկացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն, որի պատճառով Կայանի կառուցման նախագծային փաստաթղթեր չեն կազմվել: Սակայն «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանը և դրան հարակից տարածքները 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում ներկայումս վերահսկվում են ադրբեջանական զինված ուժերի կողմից: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ նոր նախագիծը հնարավոր չէ իրագործել, չնայած այն հանգամանքին, որ «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերության հողմային էլեկտրակայանով ծանրաբեռնված հողամասի և այլ հողամասերի նկատմամբ իրավունքը ստացել է պետական գրանցում, այսինքն այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Ելնելով այն հանգամանքից, որ ստեղծված իրավիճակը հանդիսանում է ֆորսմաժորային, և նշված հանգամանքներն ունեն արտակարգ և անկանխելի բնույթ, դուրս են Ընկերության վերահսկողությունից՝ Ընկերությունը խնդրել է ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգմամբ պայմանավորված՝ երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցել,

դ) Հանձնաժողովը, հաշվի առնելով Ընկերության և «ԶՈԴ ՈՒԻՆԴ» փակ բաժնետիրական ընկերության փոխկապակցվածությունը և վերջինիս համար

առաջացած ֆորսմաժորային հանգամանքի հնարավոր անուղղակի ազդեցությունը Ընկերության պարտավորությունների կատարման վրա, 2021 թվականի հունվարի 15-ի №ԳԲ/34.1-Մ4-3/71-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ և Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն՝ Դիմումի վերաբերյալ վերջինների դիրքորոշումները ստանալու նպատակով,

ե) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2021 թվականի հունվարի 22-ի գրություններով Հանձնաժողով ներկայացված դիրքորոշումների համաձայն՝ հարցը շահագրգիռ պետական մարմինների ներգրավմամբ լրացուցիչ քննարկման կարիք ունի, իսկ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահի 2021 թվականի հունվարի 25-ի №ՀՊԵ-19 գրության համաձայն՝ հարցի վերաբերյալ հնարավոր կլինի դիրքորոշում հայտնել Հաշվեքննիչ պալատի իրավասությունների սահմաններում Հանձնաժողովում իրականացվող հաշվեքննության ընթացքում: Նշվածից ելնելով՝ Հանձնաժողովը 2021 թվականի հունվարի 26-ի №ԳԲ/34.1-Մ4-3/194-2021 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ Դիմումով բարձրացված հարցի առնչությամբ քննարկում կազմակերպելու նպատակով,

զ) Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 29-ի №20Ա որոշմամբ ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է 34 ամսով՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 30-ը, իսկ որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությանն ի գիտություն ամրագրվել է, որ ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցը կքննարկվի դրա առնչությամբ շահագրգիռ պետական մարմինների վերջնական դիրքորոշումները ստանալուց հետո,

է) 2021 թվականի փետրվարի 11-ին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի է ունեցել քննարկում Ընկերության կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ,

ը) Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 24-ի №ԳԲ/34.1-Մ4-3/876-2021 գրությամբ կրկին դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ, ինչպես նաև փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակ՝ մեկ անգամ ևս խնդրելով հնարավորինս սեղմ ժամկետում հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը Ընկերության կողմից ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված պարտավորությունների չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու առնչությամբ,

թ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ սույն թվականի ապրիլի 1-ից հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի №ԳԲ/34.3-Մ2-12/1018-2021 գրությամբ,

ժ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի ապրիլի 7-ի գրությամբ, մատնանշելով Դիմումով հայտնած հանգամանքները և Ընկերության ֆինանսական ճգնաժամը, ակնկալել է Հանձնաժողովի աջակցությունը նշված հարցի կարգավորման վերաբերյալ և վերստին խնդրել, հիշյալ հանգամանքներով պայմանավորված, երաշխիքային գումարը պետական բյուջե չփոխանցել,

ժա) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 7-ի №02/12.8/11294-2021 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված պարտավորությունների չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու առնչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կարծիքները, մասնավորապես՝

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ «Սոլարսիս» ՍՊԸ-ի կողմից Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0618 լիցենզիայով ամրագրված պայմանների չկատարման կամ ոչ

պատշաճ կատարման դեպքում, եթե դա հետևանք չէ ֆորս մաժորի (տվյալ դեպքում որևէ իրավական հիմք առկա չէ Հայաստանի Հանրապետության տարածքում նշված ժամկետում Կայանի կառուցման համար) Կարգի հավելված 3-ի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Մյուս կողմից, հաշվի առնելով «Զոդ Ուինդ» փակ բաժնետիրական ընկերության կրած վնասները ինչպես գործող «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանի (որի վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչապետի №02/12.10/2941-2021 հանձնարարականը), այնպես էլ Կայանի կառուցման մասով, առաջարկել է վերոնշյալ գերատեսչությունների ներկայացուցիչների համաձայնությամբ դիտարկել ֆորս մաժորային հանգամանքների հետևանքով «Զոդ Ուինդ» փակ բաժնետիրական ընկերության վնասների փոխհատուցման հնարավորությունը՝ փաստացի ներդրումները չկորցնելու համար: Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մեկ այլ գրության համաձայն՝ Ընկերության կողմից համապատասխան պարտավորությունների չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու և դրանով պայմանավորված երաշխիքային գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցը դուրս է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավասության շրջանակներից,

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ԼԷ №0618 լիցենզիայով նախատեսված գործունեությունն Ընկերությունը պետք է իրականացնի Գավառ քաղաքի վարչական սահմաններում: Արդարադատության նախարարություն ներկայացված նյութերի համաձայն՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր է հանդիսանում «Զոդ Ուինդ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմի հետևանքով չի կարողանում շահագործել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի վարչական տարածքում կառուցված (գյուղ Սոթք) «Զոդ Ուինդ» հողմային էլեկտրակայանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

Ընկերության կողմից ԼԷ №0618 լիցենզիայով նախատեսված գործունեության վայրում լիցենզիայով նախատեսված գործունեություն իրականացնելու համար որևէ խոչընդոտ չկա և չի եղել, քանի որ պատերազմական գործողությունները Գավառ քաղաքի վարչական սահմաններում չեն ծավալվել՝ Ընկերությանը ֆորս մաժորի հիմքով երաշխիքի վճարման պարտավորությունից ազատումը խնդրահարույց է: Անհաղթահարելի ուժը, որպես պարտավորության չկատարման պատճառ և պատասխանատվությունից ազատելու հիմք ընդունելու համար անհրաժեշտ է, որ պարտավորության չկատարման և անհաղթահարելի ուժի միջև լինի ուղղակի և անմիջական պատճառահետևանքային կապ, այսինքն՝ պարտավորության չկատարումը պետք է պայմանավորված լինի անհաղթահարելի ուժի վրա հասնելով: Միաժամանակ, նախարարությունը, անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված երաշխիքի ինստիտուտին, որպես խնդրի լուծմանն ուղղված իրավական հնարավորություն, նշել է, որ Հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշում կայացնել երաշխիք տված անձին երաշխիքային պարտավորություններից ազատելու, այն է՝ երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու և երաշխիքը երաշխիք տված անձին վերադարձնելու մասին,

ժբ) Կարգի՝

- 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից լիցենզիայով ամրագրված ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու դեպքում նշված ժամկետը համարվում է երկարաձգված նախկին ժամկետի չափով, բայց ոչ ավելի, քան մինչև լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը, իսկ 2-րդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ Կարգի №3 հավելվածի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
- №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին և եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

- №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.

  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

  3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

ժգ) վարչական վարույթի շրջանակում, հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված պետական իրավասու մարմինների դիրքորոշումները, փաստվել է, որ Ընկերությունը երկրորդ անգամ երկարաձգված համարված ժամկետում՝ մինչև 2021 թվականի հունվարի 31-ը,

Հանձնաժողով չի ներկայացրել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, այդ կերպ խախտելով ԼԷ №0618 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի պահանջը, և նշված, ինչպես նաև ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածում Կայանի կառուցման պարտավորությունների չկատարումը հետևանք չէ ֆորս մաժորի, ուստի և Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են:

Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, անհաղթահարելի ուժը, որպես պարտավորության չկատարման պատճառ և պատասխանատվությունից ազատելու հիմք ընդունելու համար անհրաժեշտ է, որ պարտավորության չկատարման և անհաղթահարելի ուժի միջև լինի ուղղակի և անմիջական պատճառահետևանքային կապ, այսինքն՝ պարտավորության չկատարումը պետք է պայմանավորված լինի անհաղթահարելի ուժի վրա հասնելով: Մինչդեռ, տվյալ դեպքում, Ընկերությունը, որպես ֆորսմաժորային հանգամանք, մատնանշել է իր բաժնետեր հանդիսացող մեկ այլ ընկերության հողմային էլեկտրակայանի՝ Ադրբեջանական զինված ուժերի վերահսկման տակ անցնելու հանգամանքը, որը, սակայն, ուղղակի և անմիջական պատճառահետևանքային կապի մեջ չէ Կայանի կառուցման և դրա համապատասխան նախագծի ներկայացման պարտավորության կատարման հետ, ավելին, ինչպես փաստել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Ընկերության կողմից ԼԷ

№0618 լիցենզիայով նախատեսված գործունեության վայրում լիցենզիայով նախատեսված գործունեություն իրականացնելու համար որևէ խոչընդոտ չկա և չի եղել, քանի որ պատերազմական գործողությունները Գավառ քաղաքի վարչական սահմաններում չեն ծավալվել:

Միաժամանակ, անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով ամրագրված երաշխիքի ինստիտուտին առնչվող իրավակարգավորումներից, Հանձնաժողովը, «Էներգետիկայի մասին» օրենքի հիման վրա ընդունված Կարգի համաձայն, լիցենզավորված անձին երաշխիքով սահմանված գումարի՝ պետական բյուջե փոխանցման պարտավորությունից կարող է ազատել բացառապես մեկ դեպքում, երբ նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի, ինչի բացակայությունն էլ, տվյալ դեպքում, ըստ էության փաստվել է նաև իրավասու այլ պետական մարմինների կողմից, և

հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝

1) ԼԷ №0618 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամկետը երկարաձգելու համար սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունվարի 10-ի №01-7 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №17 41 40 04914/1 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 10,000,000 (տասը միլիոն) դրամ գումարից 5,000,000 (հինգ միլիոն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ԼԷ №0618 լիցենզիայի պայմանների 14-րդ կետով սահմանված ժամկետում՝ մինչև 2021 թվականի հունվարի 31-ը, Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով Հանձնաժողով չներկայացնելու համար սույն որոշումն

ուժի մեջ մտնելու պահից՝ մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունվարի 10-ի №01-7 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №17 41 40 04914/1 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 10,000,000 (տասը միլիոն) դրամ գումարից 5,000,000 (հինգ միլիոն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- ապրիլի 2021թ.